

Տարեկան գինը 10 բուրլի կէս տարվան 6 բուրլ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրուած են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисть, Редакция «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

ՄԵՆԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունուած է ամեն լեզուով.

Յայտարարութիւնները համար վճարուած են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հակառակ ցուցումներ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Մամուլ. Նամակ երեւանից. Նամակ
Իւրեանից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐ-
ՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲՍՆԱՍԻ-
ՐԱԿԱՆ.—Նամակ Թրանսիայից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՅՈՒՅՈՒՄՆԵՐ

Մեր առաջ դրած է մի օտարոտի հա-
նելու: Չորս դիտական հիմնարկութիւն-
ներ տուել են մի և նոյն առարկայի մա-
սին չորս տարբեր ցուցումներ, որոնցից
սակայն կախում ունի մի ամբողջ խնդիր:
Ահա բանը ինչուսէն է:

Ներկայ ձեռքը Վերին-Ազուլիսի շերա-
մապահներէն մէկը, Ա. Թադէոսեան, որ
տուել էր իր պատրաստած շերամի սերմը
Թիֆլիսի շերամապահական կայարանին
ընկերու, մնաց անբաւական այդ քննու-
թիւնից եւ կասկած յայտնեց հետազոտու-
թեան ճշգրտութեան վերաբերութեամբ: Նա
գլխից կոկիլասեան Կիւլաանտեսական ըն-
կերութեան, խնդրելով վերաքննել այն
սերմը, որ կայարանի կողմից ճանաչված է
ֆլասակար եւ անթոյլատրելի վաճառման
համար: Ընկերութիւնը ուղարկեց իր կող-
մից երկրագործութեան միջնարկութեանը
այդ սերմը, խնդրելով կատարել քննութիւն
է մի նմուշ էլ ուղարկեց Սոքայի շերա-
մապահական մասնաժողովին: Միջնարկու-
թիւնը իր կողմից դիմեց Վոսկայի մաս-
նաժողովին եւ Վարչախոյնի շերամապահ-
ական ընկերութեան:

Այժմ ամեն տեղից ստացված են պա-
տասխաններ եւ ահա նրանց հետեւանքը:
Վոսկայի շերամապահական կայարանը
յայտնում է, որ սերմը կատարելապէս
առողջ է եւ բոլորովին աղատ է պերրին
հիւանդութիւնից: Վարչախոյնի ընկերու-
թիւնը գտել է պերրին հետքեր, իսկ
Սոքայի մասնաժողովը գտել է պերրին
քանակութիւնը 2—4%, որ նոյնպէս
գտել համարվում է թոյլատրելի, որովհե-
տեւ վտանգաւոր եւ ֆլասակար ճանաչված
է այն սերմը, որ պարունակում է պերրին
5%-ից աւելի:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿՆԵՐ ԾՈՒՑԱԶԱՆԴԻՍԻՑ

Պարիզ, յունիսի 2-ին

Գեղարուեստական բաժնի մեծ պալատի (Le
grand palais des Beaux-arts) բազմաթիւ դահ-
լիւններում ի ցոյց են դրված Փրանսիական եւ
օտարազգի արտիստների գործերը՝ իւզաների,
ջրաների, գծագիր պատկերների, ճարտարապե-
տական արուեստի նմուշների, մեդալիւնների եւ այլն:
Այս չէնքում Փրանսիացի արտիստները, հակա-
ռակ հիւրապիւրութեան ընդունված օրէնքներին,
առիւծի բաժին են յատկացրել իրանց. բոլոր
գահլիւնների կէտից աւելին բռնում են նրանց
գործերը եւ մնացածը յատկացրած է բոլոր
միւս ազգերի արուեստագէտներին: Թէեւ այս-
պիսի մի անհրաժեշտ վարձուքը արտիստների
կողմից չափ էլ զարմանք չը պիտի պատճառէ:
Փորձեցէք թէկուզ գլխատանտ երաժշտի խնդ-
րի, որ մի կտոր ածէ. նա նախ կը մերժէ, իսկ
կեր ածել ակնք, էլ վերջ չի տայ. մի նկա-
րել է իր լաւ տրամադրութեան ժամանակ, որ
սկսէ իր գործերից, իր աշխատանքից խօսել.
կամ որ յանձն առնէ ցոյց տալ իր նկարները,
պէտք է հար փնտռել օժիւրը մի կերպով ա-
զատել: Չը զարմանանք, ուրեմն, որ Փրանսիա-
ցի արտիստները իրանց այդ թուրութիւնը գո-
հացնելու համար զանազանութեան են տուել
հիւրապիւրութեան կանօնները: Այսպիսով մինչ-
դեռ Փրանսիական պատկերները, եթէ չեն ըս-

Մենք կանգ չէինք առնի մի մասնաւոր
դէպքի վրա, եթէ զա չը շօշափէր աւելի
ընդարձակ խնդիր եւ չը վերաբերէր բազ-
մաթիւ մարդկանց շահերին: Ո՞վ կարող է
երաշխաւոր լինել, որ ուրիշ շատ սերմի
նմուշներ, որոնք ընդունված են Թիֆլիսի
շերամապահական կայարանի կողմից լաւ
կամ վատ, չէին ծանաչվի ուրիշ նոյնանման
հիմնարկութիւնների կողմից իբրեւ հակա-
ռակ յատկութիւն ունեցող: Ո՞վ է այստեղ
արդարը եւ ո՞վ մեղաւորը: Ո՞ր հիմնար-
կութեան պէտք է հաւատալ եւ ո՞րի ցուց-
մունքներով ղեկավարվի:

Ահա մի շարք խնդիրներ, որոնք բնա-
կանաբար առաջ են եկել և որոնք պա-
հանում են հեղինակաւոր լուծումներ: Եթէ
աւելացնենք և այն հանգամանքը, որ շե-
րամապահները չը ջանասիրում շարունակ
լավում են զանազան տարբեր կարծիքներ
հետազոտված սերմերի մասին, հասկանա-
լի է, որ մեր առաջ բերած երեւոյթը
պէտք է յարուցանի տարակուսանքներ ազ-
գայնակութեան այն մասի մէջ, որ յայտ-
նի նշանակութիւն է տալիս շերամապա-
հական կայարանի ցուցմունքներին:

Եթէ շերամապահութեան զարգացումը
թանգ է մեր երկրի համար, պէտք է այդ
զարգացման վրա հսկող հիմնարկութիւն-
ները աշխատեն բացատրել մեր առաջ
դրած հանելուկը եւ փարատեն շերամա-
պահների չը ջանասիրում եղած կասկա-
ծները:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Լրագիրը պիտի ունենայ որոշ, հաստատ հա-
մոզմունք, պիտի հետեւէ մի յայտնի դրօշակի,
պիտի դաւանէ մի հաստատ ուղղութիւն: Քա-
նի քանի անգամ է կրկնված այս ճշմարտու-
թիւնը աշխարհի մէջ: Ինչպէս նաեւ առանց
ղեկի մասնավոր է հասանքների, քամիների ըն-
դանաճողներ, մի տեղից միւս տեղի է ընկնում,
զարնվում է այս կամ այն ծովափին, այնպէս
էլ անսկզբունք հրապարակասօսութիւնը տա-
տանվում է հակասութիւնների մէջ, մերթ այս-
պէս է խօսում, մերթ մի ուրիշ կերպ: Այդ

խալվում, բռնում են մօտ 36 ընդարձակ դահ-
լիւններ, մնացած մեծ ու փոքր ազգութիւննե-
րից իւրաքանչիւրին հազիւ բաժին է ընկել
2—3—4 դահլիւն միայն:

Եթէ մի կողմից Փրանսիացի գեղարուեստա-
գէտները, առաջնորդ աւանդով այնպիսի ա-
ղանդու, անբարեկամ, ինչպէս Բենիամին Կօնս-
տան եւ ուրիշները, կարողացել են իրանց գը-
րուած բազմաթիւ դահլիւնները Փրանսիական
արուեստի ազօթեցող վայր դարձնել հարիւ-
րաւոր chef-d'oeuvre-ներով, միւս կողմից մը-
նացած մասերում գեղարուեստաբար զե-
ղարուեստագէտների գործերը ոչ պակաս հե-
տաքերական են դառնում, ներկայացնելով
զանազան երկրների բարձր, զգեստները,
պատմութիւնը, լեզունքները, հասարակական
իդէալները, բնութիւնը եւ վերջապէս գեղա-
րուեստն ըմբռնելու եղանակը:

Խնկացի մտքով է առաջնորդվել այս մասի
կարգադրելը, որ մի չէնքի մէջ դասաւորել է
բոլոր երկրների գեղարուեստական գործերը
Վերին աստիճանի կրթիչ, խիստ ուսանելի է
դառնում այս հետաքրքրական բաժինը, երբ
մարդ քայլ առ քայլ անցնում է մի դահ-
լիւնից միւս դահլիւնով, դիտում է, համեմա-
տում է իրար հետ զանազան երկրների ա-
րուեստի արտադրութիւնները: Թուում է, թէ
մարդ աշխարհի շուրջը ճանապարհորդութիւն է
կատարում եւ թէ հետզհետէ իր աչքի առաջից
անցնում են տարբեր ցեղի, տարբեր տարազի
ժողովուրդներ, ցուրտ եւ տաք կլիմաներ, այր-
ված ու սառցապատ լեռնային կատարներ, ձիւ-
նոտ եւ կանաչապատ հարթութիւններ, բեւեռի
եւ հասարակածի կենդանիներ:

դրութեան մէջ է թիրաքահայոց մասուր ընդ-
հանրապէս: Մէկ տեսնում էք հերքվում է կու-
սակցութեան, մինչեւ իսկ գաղափարական
կուսակցութեան օգուտը, պահանջվում է, որ
ամենքը միատեսակ մասածեն ու գրեն, մի շար-
քին, մի չափ ու կշիռ ունենան երեւոյթները
հասկանալու համար. մէկ տեսնում էք, որ
տրտուներ եւ միմուշներ են արձակվում
քննադատութեան դէմ, նոյն իսկ այն մեղի ու
թող, վախկոտ եւ հազար ու մի տեղից ճնշ-
ված քննադատութեան դէմ, որ թիրաքական
միջնորդում միայն կարող է գոյութիւն պահ-
պանել եթէ յիշում են մեր ընթերցողները,
Կ. Պօլսի «Սուրհանդակ» լրագիրը պահանջում
էր, որ չը լինի քննադատութիւն, որ վատու-
թիւնը ծածկիլ եւ միայն ջատագովութիւնները
հրապարակ դառն ի խրախոյս եւ ի միջնորդ-
ութիւն ամենքի: Այժմ նոյն «Սուրհանդակ»
զանգաւորում է, որ թիրաքահայերը առհասա-
րակ մակերեւոյթական են:

Մենք այսպէս ենք: Չենք հետաքրքրուի-
լրաց խորը թափանցելու, գործի մը իրական
արժանիքին անձամբ վերահասու ըլլալու
համար: Մակերեւոյթ, մակերեւոյթ միայն,
ատկիկ բաւական է մեզի: Ասիկա կը նշ-
մարդի մեր անձնական եւ ընկերային բոլոր
գործերուն մէջ ալ: Արտաքինը, ցոյցը, չափ-
ը, ձեւը, փայլը բաւական են կատարելա-
պէս գոհացնելու մեր հետաքրքրութիւնը:
Իրերու վրայ հարեւանցի ակնարկ մը նետե-
լով, կը կարծենք ճանչցած ըլլալ զանոնք ի-
րենց բոլոր առանձնատկութիւններով, եւ
չափ անգամ այդ հարեւանցի ուղարկութեամբ
կազմուած գաղափարին վրայ կը հիմնենք
առեւարական գործառնութիւններ, որոնց մեր
յուսացածին բոլորովին հակառակ արդիւնք
մը տալը զարմացումով, եւ շատ անգամ ալ
ցաւով կը տեսնենք քիչ վերջը: Չենք մտա-
ծեր թէ երեւոյթը խաբուսիկ է շատ անգամ,
թէ ոսկեգոծ զեղանակները ամենէն աւելի
լեղի կըլլան շատ անգամ, թէ ամենէն փայ-
լուն երեւցած առարկաներն են, որ ամենէն
խոշոր տեղութիւնը կը ծածկեն արտաքին
փայլի մը տակ: Փայլուն երեւոյթ ունեցող
ծաղիկներ կան, որոնք թունալից հիւթ մը
կը պահեն իրենց մէջ:

Դիտողութիւնը համբերատար եւ յարատեւ
աշխատութեամբ իրաց խորազննին ուսում-
նաարութիւնը միայն կարող են ճանչնել
մեղի իրական աշխարհը, պարզել մեր առջեւ
ընտելեան անհամար թաքուն գաղափարներ
ը: Այս գաղափարներուն հետազոտութեան
նուիրուած մեծ հոգիները կրցած են աշխար-
թեան, որոնք աւելի կամ պակաս ճշգրտութեամբ
պատկերացնում են մի ժողովրդի կեանքի ու-
չազրաւ կողմերը, նրա հոգին:

Առաջին դահլիւնը, ուր ներս ենք մտնում Սե-
նայի ափին բացվող դահլիւն, ուսումնական եւ
ֆինանսական բաժին է ներկայացնում եւ ա-
ռաջին նկարը, որ աչքի է ընկնում, դա մեր
մեծ հայրենակցի՝ Ալլադովսկու «Ուլիանոսն է»,
որ սեւով է պատած եւ կարծես աշխարհի հետ
սգում է իր տիրաջ կորուստը: Ինչպէս ամեն
մի երիտասարդ ազգ, երեւի ուսում ժողովուրդն
էլ սիրում է իր լեզունքները, իր հին հերոս-
ներին, որոնց յիշողութիւնները զեռ ապրում
են խրճիթներում, որոնց ստուերները գիշեր
ժամանակ դեռ թափառում են սուսական հար-
թութիւնների վրա անսանձ քամիների նկատ
Սրանով պիտի բացատրել, գուցէ, ուսում նկա-
րիչներն աչքի ընկնող ձգտումը պատկերացնել
առասպելական հերոսներին, զրահապատ, դան-
դաղաշարժ, բայց հուժկու մարդկանց: Հէ-
քիաթներից վերցրած այս պատկերները համե-
մատաբար աչքի ընկնող թիւ են կազմում:
Այնուհետեւ գալիս են իրանց միակերպութեամբ
տիւուր, հոգեմաշ ուսումնական պէջաւորները, ո-
րոնք այնպէս խորհիւ են տալիս, այն անհուն
հարթութիւնները, որոնք անհունութիւն են
երազել տալիս անորոշ խորհուրդներով սքող-
ված: Ռուս ժողովրդի դաշտային աշխատանք-
ները, դանդաղ, յարատեւ միակերպ: Աստղերի
տակ ողորդող ծոյլ վոլգան, որ կարծես գաղա-
փարներն է հին հէքիաթների վիճակ աւանդա-
պահ է եւ ոչ ոքի յայտնելու ցանկութիւն չու-
նի, եւ ամեն է վրան, չէ չարժանի եւ երազում
է: Խաչեր ու խաչակերպներ, աղօթք ու աշխա-

հր քաղաքակրթութեան ներկայ փայլուն դի-
մակին հասցնել, ուրիշ կողմուրի ամբողջ
մարդկութիւնը: Եւ էն հետին անձն անգամ,
որ կուզէ անհատապէս յաջողիլ իր արհեստին
մէջ, եւ օգտակար տարր մը ըլլալ ընկերու-
թեան, պէտք է հետեւող մը ըլլալ այդ մեծ
հոգիներու մեթոդին, իր գտնուած ահմա-
նին մէջ անշուշտ: Միջավայրը, միջ շրջա-
պատող հասարակութիւններու բարձրը,
ճաշակները, սովորոյթները ուսումնասիրու-
թեան առատ նոյթ են մեզի, զորս ճանչ-
նալով մեծ յառաջգիծութիւններ կրնանք ը-
նել ընկերային բարեօք յարաբերութիւն-
ներու, առեւտրական ասպարէզին, կրթա-
կան եւ ասոնց նման գործերու մէջ: Ամեն
բանի խորը թափանցել: Այս պէտք է ըլլալ
նշանաբանը ամեն անոնց, որոնք կուզեն
պատուաւոր դիրք մը բռնել ընկերութեան
մէջ, դիտակցութիւն դնել իրենց բոլոր գոր-
ծերուն, քննադատութիւնուն, հակակրթութեան,
սիրոյն մէջ:

Այս սկզբունքները մարդը իւրացրել է այն
հնագոյն ժամանակներից, երբ սկսեց քաղա-
քակրթվել, հասկանալ իր դիրքն ու նշանա-
կութիւնը աշխարհի մէջ: Դեռ երբ էր, որ յու-
նաց փիլիսոփայութիւնը գրում էր դպրոցի
ճակատին «Ճանաչիւր զքեզ»: Ինչու իրան ճանա-
չիլ չէ նշանակում, թէ մարդը պիտի խորա-
սուզվի իր մէջ, միայն իրան ճանաչէ,—դա կը
լինէր եսամոլութիւն, որ գաղափարային յատկու-
թիւն է: Ճանաչել պէտք է կեանքը, ամբողջ
աշխարհը: Բայց դուք ինչպէս կը ճանաչէք
մարդուն եւ նրա գործերը, ինչպէս կը թափանցեք
ընտելեան գաղափարների մէջ, երբ բացակայ
է քննադատութիւնը, այսինքն այն լոյսը, որ
պիտի առաջնորդէ ձեզ ձեր խուզարկութիւն-
ների մէջ: Մի բան ճանաչելու, ըմբռնելու հա-
մար դուք նախ եւ առաջ պիտի նայէք նրան,
պիտի անպատճառ հայեցակէտ ունենաք, այս-
ինքն որդեք ձեր բռնած դիրքը յայտնի առար-
կայի, երեւոյթի վերաբերմամբ. իսկ դա կարող
է լինել միայն այն ժամանակ, երբ ձեր մէջ
զարգացած է զննելու, վերլուծելու եւ այլադի-
սով առարկայի, երեւոյթի բնութիւնը ըմբռնե-
լու կարողութիւնը: Սովորեցե՛ք անտարբեր մը-
նալ դէպք ձեր առջեւ եղածը եւ դուք միայն
մակերեւոյթ կը շօշափէք, դուք կը լինէք թե-
թեւ, երբեք հակադրողութեան տէր, ձեզա-
նում չի լինի յայտնի, որոշ կերպով գծադրված
աշխարհայեցողութիւն: Ուրեմն ամեն տեղ եւ
ամեն բանի մէջ—քննադատութիւն: Ուսումնա-

թեան, որոնք աւելի կամ պակաս ճշգրտութեամբ
պատկերացնում են մի ժողովրդի կեանքի ու-
չազրաւ կողմերը, նրա հոգին:

Առաջին դահլիւնը, ուր ներս ենք մտնում Սե-
նայի ափին բացվող դահլիւն, ուսումնական եւ
ֆինանսական բաժին է ներկայացնում եւ ա-
ռաջին նկարը, որ աչքի է ընկնում, դա մեր
մեծ հայրենակցի՝ Ալլադովսկու «Ուլիանոսն է»,
որ սեւով է պատած եւ կարծես աշխարհի հետ
սգում է իր տիրաջ կորուստը: Ինչպէս ամեն
մի երիտասարդ ազգ, երեւի ուսում ժողովուրդն
էլ սիրում է իր լեզունքները, իր հին հերոս-
ներին, որոնց յիշողութիւնները զեռ ապրում
են խրճիթներում, որոնց ստուերները գիշեր
ժամանակ դեռ թափառում են սուսական հար-
թութիւնների վրա անսանձ քամիների նկատ
Սրանով պիտի բացատրել, գուցէ, ուսում նկա-
րիչներն աչքի ընկնող ձգտումը պատկերացնել
առասպելական հերոսներին, զրահապատ, դան-
դաղաշարժ, բայց հուժկու մարդկանց: Հէ-
քիաթներից վերցրած այս պատկերները համե-
մատաբար աչքի ընկնող թիւ են կազմում:
Այնուհետեւ գալիս են իրանց միակերպութեամբ
տիւուր, հոգեմաշ ուսումնական պէջաւորները, ո-
րոնք այնպէս խորհիւ են տալիս, այն անհուն
հարթութիւնները, որոնք անհունութիւն են
երազել տալիս անորոշ խորհուրդներով սքող-
ված: Ռուս ժողովրդի դաշտային աշխատանք-
ները, դանդաղ, յարատեւ միակերպ: Աստղերի
տակ ողորդող ծոյլ վոլգան, որ կարծես գաղա-
փարներն է հին հէքիաթների վիճակ աւանդա-
պահ է եւ ոչ ոքի յայտնելու ցանկութիւն չու-
նի, եւ ամեն է վրան, չէ չարժանի եւ երազում
է: Խաչեր ու խաչակերպներ, աղօթք ու աշխա-

նախորդներն կատարել առանց քննադատական կարողութեան—անհնարին է։ Եւ եթէ քննադատութիւնը խիստ է, ցարկնայող է, եթէ նա սպանում է քանդակ շատ բան—դա չը պիտի վախ ներշնչէ ձեզ, քանի որ այդ դէպքում գործում է բնական օրէնքը, վերաշինող, բեշտող օրէնքը։ Ամենից վատը, ամենից վնասակարը մտքի տատանումներն են, հաստատ յենակէտի, պարզ նպատակակէտի բացակայութիւնն է։ Պէտք է այդպիսի ինքնասպանութեան, ոչնչացման չը հասնել։ Ահա հասարակաց միտքը զեկամարող մամուլի դաւանանքը...

Մի ուրիշ նմուշ Կ. Պոլսի հայոց լրագրիչներն ապշեցնող թեթեւամտութեան։ Երուսաղէմ ուխտ է գնացել եւ այնտեղից Պոլսի է մտել մի ոմն վաճառական Գրիգոր Թումանեան—եւ ահա Պարոնեանի «Մեծապատիւ մուրացկաններին» մի շարք էջեր են բացվում լրագրիչների մէջ։ Կարծէք թէ եկողը բրազիլական հանրապետութեան նախագահն է։ Նկարագրւում է պ. Թումանեանի իւրաքանչիւր քայլը, թէ ուր գնաց նա, ուր բարեհաճեց ճաշ վայելել, ում հետ էր ման գալիս, Երուսաղէմում որքան աջահամբոյր է տուել եւ այլն եւ այլն։ Բանը այն տեղին հասաւ, որ հանրածանօթ հայկառակ եւ կրթական առաքեալ Ա. Այվազեան էֆէնդին տպագրեց «Արեւելքի» մէջ Թումանեանի կենսագրութիւնը։ Եւ ինչ մեծագործութիւններ էք գտնում այդ կենսագրութեան մէջ։ Ահա մի նմուշ։

Երուսաղէմի մէջ ամէն սրբավայրեր չըլտաւորւած են բաց ի Յորդանանն ու Երէքովէն, ուր օդին տաքութեանը պատճառով չեն կրցած երթալ։ Երուսաղէմէ վերադարձին՝ Ալեքսանդրիա եւ Գահիրէ քաղաք, ու տեղական բոլոր հնութիւնները ուսումնասիրած են, տասը օրի չափ ժամանակ անցրելով Եգիպտոսի մէջ։ Անցեալ շաբթուին ի վեր մայրաքաղաքս կը գտնուէին Երէկ եւ անցի օրը՝ Պոլսոյ Մեծ-Շուկան գացին եւ գնումներ ըրին ոսկերիներէն եւ անթիգաճիններէն։ Ի մէջ այլոց ոսկերէն եւ աղամանդեայ զարդեղէններ առին Մ. եւ Հ. Փիւսկիւսան եղբայրներէն, որ թանկագին քաւերու գնում եւ վաճառում կրնան, ինչպէս նաեւ ոսկեհաւ արեւելեան շաւրներ գնելին հայազգի անթիգաճ Օձ առնանէն։ Պոլսոյ մէջ գտնուած հետաքրքրական ու պատմական վայրերը չըլելէ զատ, գացին տեան Վոսթորի եւ Իշխանաց կղզիներն ալ, այցելելով միանգամայն Եփեսոսէն Ս. Փրկչեան Ազգային Հիւանդանոց, Երուսաղէմատունը, մայր-եկեղեցին, եւ այլն։

Անշուշտ այս գործողութիւններով էլ վաճառական Թումանեանը կանխահայ ազգային պատմութեան մէջ, ուղ գիտէ գուցէ եւ մանկ համալսարանային պատմութեան էջերը, կըր պատմութիւն գրելը Կ. Պոլսի հոտաններին կը մնայ։ Մեզ այդ չէ հետաքրքրում։ Հետաքրքրական այն է թէ մեծապատիւ մուրացկանը ինչ փոխարինութիւն է ստացել Արեւելքում ազգային իր այս «ստեղծագործութեան» համար։

տանը։ Մեծ, հզօր եւ բարեպաշտ Ռուսաստանն է, որ նայում է այս պատկերների միջից։ Մեկնախօսիկ, ցուրտ պոէզիա ունի Ֆինլանդիան։ Ժայռոք, ժայռեր, որ կարծես ստորերկրային մի յանկարծակիս թափից Ժայռ կազմած սղմում են սառը լճերի ափերը, ասեւ կուզէին ջնջել երկրի երեսից ջրերի այդ փոքրիկ կտորները։ Եւ սակայն այդ ժայռերի մէջ խոհուն, կոյրդ դէմքով, խորը աչքերով, թաւ յօնքերով, յամառ աշխատանքի սովոր չիկաներ ֆինլանդացիներ չարչարվում է, նա չանցնում է գրաւոր այնտեղ սերմ ձգելու համար։ Ապերիւստ երկիր, որ այնքան ժլատ է իր տուրքերի մէջ եւ այնքան ազա՛ իր զաւակների քրտինքին։ Մեկնախօսիկ է զարթեցնում նաեւ Ֆինլանդիայի կարճատեւ, մրսկան ամառը. հազիւ կանաչած անտառները տերեւների սօսափրնով սասեւ բնութիւնից գթութիւն են հայցում ներքեւ իրանց յանդգնութիւնը, որ համարձակվել են զարդարվել Նայեյէք, այստեղ ծառերի տակ մի անտառում կոյրդ ծունկ է չօքել Բրիստոսի առաջ. դա ֆիննական մի լեզուաբան է, ամառ է թէւ, բայց ձեզ թուում է, որ թէ կոյրդ եւ թէ Բրիստոսը մրսուտ, զողում են։ Որքան շատ բան են ասում այս երեք դէպքերը, երկու կին եւ մի տղամարդ։ Երեկոյան մառախուղ իջնում է եւ նրանք վերադառնում են ձուկ որսալուց, ուղաններն ուսերին դրած։ Նրանք իրար յետեւից քայլում են լճակի ափով, որի մառախապատ փօնի վրա գրծազրկում են չէկ դէմքերը, խոհուն գծերով, տխրութեան չափ ասածկտա, ամեն մէկն իր մէջ ամփոփված, իրարից անկախ, բայց մի եւ նորն մտքով ընկնում, մի եւ նոյն հոգով տար-

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Մայիսի 28-ին

Եթէ Թուրքը Երեւանին չը հասաւ, Երեւանը Թուրքիին հասաւ։ Քաղաքում թխած հաց չը կայ. ժողովուրդը քաղցած է, շատերն ամբողջ օրով քաղցած են մնում, բառիս բուն նշանակութեամբ։ «Ի՞նչ ուզրաւա, ի՞նչ դուժա, երբ այսօր փողը ձեռքերիս հաց չենք դրած»։ Գոտի են ամենքը—արհեստավորը, վաճառականը, հասարակ քաղաքային։ Եւ չափազանցութիւն մի համարէք ա.ս բանը։ Ես որ ունեմ ծանօթ ձայնավորներ, չուկայում հսկող պաշտօնականներ եւ այնպիսիների չեմ, որ մաշադի «չորաբէյին» համարձակվէր ասել՝ քեզ հաց չի հասնի, այսօր առաւօտեան փամբ 6-ից մինչեւ 9-ը այս ու այն հայալվաճառի խանութի առաջ սպասելով՝ դարձեալ չը կարողացայ իմ ուզած լոյ հացն ստանալ։ Երեւակայեցէք հասարակ դասի եւ մանաւանդ մշակների դրութիւնը, որոնց շատ հայթիւններ մինչեւ անգամ խանութի առաջ կանգնելու իրաւունք չեն տալիս։

Այսպէս լինելուց յետոյ, զարմանալի չէ անցեալ կիրակի տեղի ունեցած երեւոյթը, որը յատուկ է միմիայն Թուրքիին։ Թուրք կանաչը, հասարակութեան այդ մոռացված մասը, բուն լազըրած երկխոսների ձեռքերից, խմբվելիս նահապետական տան առաջ եւ բողբոջելիս, որ քաղցից մեռնում են եւ խնդրում են մի կարգադրութիւն։ Դրանից յետոյ խմբվելիս թուրք եւ հայ տղամարդիկ, որը բողբոջելով որ հաց չէ գտնվում, որն էլ ցույց տալով ֆունտը 3 կոպէկով գնած սեւ տաք խմորը, որն ուտել անկարելի է։ Ի հարկէ, այդ գնահատանքի վրա ուշադրութիւն դարձրելիք. նահապետական կարգադրութեամբ, ստիկանութիւնը այս ու այն կողմը դիպաւ, եւ սպանալիքների տակ հայալվաճառներին հարկադրեց անմիջապէս ժողովրդին հաց տալ։ Մի օրով եւս ժողովուրդը կշտայաւ, բայց այսօր նոյն դրութիւնն սկսեց վեր, չը նայեմ որ երեք օր անմիջապէս քաղաքային խորհուրդն իր հերթական նիստում, ի նկատի ունենալով ներկայ դրութիւնը, հացի լիարբ 36 կոպէկից բարձրացրեց 40 կոպէկ։ 3 կոպէկ եւ կէս վաճառել մի ֆունտ սեւ, անմաքուր խմորին եւ ուտել նրան կարծրանալուց յետոյ, այդ էլ մեծ տենչ է երեւանցու համար, բայց այդ խմորն անգամ ձեռք չէ ընկնում։ Մի խօսքով այժմ ամենքը հացի հոգան են քաշում. բան ու գործ թողած, ամենքն անխորթ թափված են «չորաբէյների» խանութների առաջ, թէ ինչպէս երկու կամ երեք ժամից յետոյ հերթը, երանելի օրակն իրանց կը հասնի եւ ասանք քաղցած երկխոսներին մի կտոր հաց կը հասցնեն։ Եւ ինչ է անում այդ ժամանակ մեր մաշադին. թեք նստած կշեռքի առաջ, առնալ էլ անհնում այդ խմորը՝ բան ու գործի աէր, բայց մի չարէք կամ կէս լիարի համար գերի դառած ամբոխին, որի ոչ խնդրեք, ոչ պահանջը եւ ոչ էլ սպանալիքը պատաս-

ված, ունալն աշխատանքի ցաւն են պատկերացնում երեքն էլ, արդեօք անաջող է եղել իրանց որսը, ի դերեւ եւ անցիկ յոյսերը։ Բայց բոլոր դէմքերն էլ այդպէս խոհուն են, մոռալաքով։ Մի գրաւիչ մեղմութիւն ունեն ֆինլանդական խրճիթները, խաղաղ անկիւններ, ուր հաճելի է երեւի ձմրան երկար գիշերներին նստել անդադար վառվող վառարանի առաջ, լսել դրսում ունացող քամու ձայնը, անտառների կայինների հնոտը, կըր խրճիթների շուրջը թափառում են ոգիները, եւ անուշապատ ժայռերը ձայնի են հանում, խօսում. ահա այդ ժամանակին հիւսովում են այն լեզուն դանկը, որոնք ֆինն նկարիչներն այնքան ոգեւորել են։ Բազմաթիւ են դրանցից վերցրած նկարները։ Ցուրտ է Ֆինլանդիան, ձիւնով ծածկված, մարմինը մրսում է. նա հաստ մուշտակի, լաւ ծածկվելու կարիք ունի։ Այդ է պատճառն արդեօք, որ ֆինն արուեստագէտը մերկութիւնը չէ սիրում. մի հատ մերկ մարմին չը կայ այստեղ, երեւի մերկ մարմին գիրքն անգամ սարսուռ կաղզէր նրանց, ամենքը ծածկված են։

Բնութիւնով շատ չեն տարբերվում Ֆինլանդիայից սկանդինավեան ցեղով բնակված երկիրներ՝ Շվեդ-Նորվեգիան, Դանիա։ Բնական պատկերներն եւ բազմաթիւ մանր լճերն աշխարհ են սրանք, ուր մարդու եւ բնութեան կիւրը խիստ է եւ յարմար։ Խորքի նակ չէ, որ որոշ ընդհանուր նմանութիւն կայ նաեւ սրանց արուեստի մէջ, մէկը միւսից աւելի կամ պակաս չափով ազդված է, առանց իր մասնաւոր յատուկ բնատրուութիւնը կորցնելու։

Կծարաստը կատարեալ է, երբ մարդ անց-

խանի չեն արժանանում։ Այդ օրակն հայթիւս մաշադին մի քուրմ է, որի խորին մտքերն անկարելի է խանգարել, իսկ ներսում նրա չափերը, տեսնում ես, մի երկու հաց միայն թոնրից դուրս բերելուց յետոյ, մէկ քրտինքը սրեց եւ նստեց թէյ խմելու, նորից մի երկու հաց եւս թոնրից հանելուց յետոյ՝ այս անգամ «լուլէլի-նը» վերջից իբր դուրս գնալու։ Վերադառնալուց եւ մի երկու հաց նորից հանելուց յետոյ՝ այս անգամ էլ նորից զէյլանը զլթզլթացնելու եւ այսպէս շարունակաբար։

Այս տարվայ բերքը մեծ առատութիւն է խոտանում. մի երկու շաբաթ եւս եւ նոր ցորենը դուրս կը գայ, եւ հաւանական է արբաւական իջնէ հացի գինը։ Սակայն վերջին ժամանակ տեղացող կարկուտները կարծէք օգնութեան հասան ցորենատէրերին եւ գիւղերում բուն դրած վախառուներին։ Սրանք այս անգամ էլ ստեղծելին մի այնպիսի դրութիւն, որ ուղղակի մեր նահանգից սովի հոտ է փրչում։ Ինչ եղաւ այս մի երկու շաբաթվայ ընթացքում, որ իրարանցում ընկաւ ժողովրդի մէջ։ Միթէ այս բոլորը մեր դուժան չէ տեսնում. եւ եթէ տեսնում է, միթէ հացի գինը մի քանի կոպէկ թանցանելով չարքի առաջն առնում է։ Այսպիսի ծանր դրութիւնը ընկնում է մեր դուժայի վրա, որը կարծէք իր գերը կատարած վերջացած լինի. միթէ այնքան ոգեւորված առաջ քաշելով ներկայ պ.պ. ձայնավորներին, ժողովուրդն այսօր դառն զրգւններն մէջ իր դժգոհութիւնը հացի տեղ պիտի ծածկէ։ Թերեւս հարց տան, թէ ձայնավորները-դուժան ինչ կարող են անել։ Մենք այսքանը կասենք. Այժմ շատ շատերը նոյն իսկ մեր ձայնավորներից գիտեն ցորենի ամբարի տեղեր, ձանաչում են ցորեն ունեցողներին, նստում կանգնում եւ բարեկամութիւն են առնում այնպիսի մարդկանց հետ, որոնք նկատված են որպէս ցորենի արհեստական թանցութիւն առաջացողներ, սակայն մինչեւ այսօր այդ ձայնավորներից ոչ քաջութիւն ունեցաւ բարձրանալու, մասնաւոր չեն ցորենի ամբարների վրա եւ առաջարկելու, որ դիմեն նահապետական եւ խնդրեն բաց անել տալ այդ ամբարները։—Ոչ ոք. եթէ մի ձայնավոր, որ կուլված է քաղաքի շահերը պաշտպանելու եւ ժողովրդին դիւրութիւններ տալու, այսպիսի ծանր դրութեան ժամանակ մի փոքր վճռողական լինելու քաջութիւն չունի, ի հարկէ, սրբանից լաւ օրերի չը պէտք է սպասել էր։

Բ. Վ.

ՆԱՄԱԿ ԻՐԵՐՎԻՑ

Ամսիկ 15-ին Իրեւիկ (Դորպատի) համալսարանի հանդիսարանում, ունեցողներին խօսում բազմութեան ներխուժեալով, կայացաւ բժիշկ Միքայի Մուրադեանի «Եւ вопросу о влиянии приёмы пастеризованного виноградного сока на общій азотообмѣнъ, въ сѣ тѣла и кнѣчное гнѣніе у здороваго человека при смѣ-

նում է իտալական բաժինը. գեղարուեստի կլասիկական հայրենիքը պատուաւոր տեղ է ընտնւմ այստեղ։ Պատկերները ներկայացնում են հարաւային պէյզաճներն իրանց վառ կանաչով, կապտաւուն միշտ ծաղուներով, ուր հազիւ երբեմն անցնում են ամպեր վախվիւրով, կիզիչ արեւի պայծառ շողեր, տաք, փարթամ ու սուրճոտ, մի բնութիւն, որ այնպէս բարեկամ է մարդուն, եւ հնչողութեանը է առաջիկա թաղարած բարիքը։ Օրիորդ Բոմանին է անդովել այդ բնութիւնը պատկերացնել հարաւի աղջկայ, տենչալից իտալուհու մէջ իր մի քանի կանացի տիպերով, որ քնքոյչ նկարչուհին ի ցույց է դրել այստեղ։ Հետաքրքիր է տեսնել մի կնոջ ձեռքով կանացի բոլոր դրաւորութիւնները, կանաչիւթեան գիւթի, խորհրդաւոր պօզիւհան պատկերացրած։ Չը նայելով որ մարմինը հարաւում մերկութիւն է սիրում զով դալարների թարմութիւնը, երեկոյեան մեղմ քամու շունչը վայելելու համար, այնու ամենայնիւ մերկ չեն օրիորդի տիպերը, երեւի կանացի վրձինը դրժաւարանում է օրինելով դառնալ, երբ այժմ է գեղեցիկ սեռի հրապոյրները իդէալականանում։ Բայց այդ դէպքերը, այդ կիզիչ հայեցանքները, որ լին են հմայքով, ամբողջ մարմնի պօզիւի այդ գիւթի թուլութիւնը, բոլորովին բաւական են հարաւը զգալու, հասկանալու համար։ Եթէ ճշմարիտ է, որ արտադրելու համար զգալ է հարկաւոր, ապա առանց նկարչուհու տեսնելու թուլաւորելի է նեթադրել, որ նա մի զգայուն, կանաչով զեղուն, հարաւի մեղիւթիւնը սիրող արուեստագէտ է։

Այստեղ առանձին ուշադրութիւն են գրա-

шанной пшцы» դիւրապայից հրապարակական պաշտպանութիւնը՝ բժշկապետութեան առիճան ստանալու համար։ Պաշտօնական ընդգիծութեանը նշանակված էին պրօֆէսորներ Սյուպին, Վասիլիւ եւ Ջիրվիսկի։

Բժ. Մուրադեանի ներկայացրած աշխատութիւնը ըստ ինքեան առածին կարեւորութիւն է ներկայացնում ոչ միայն նիւթի նորութեան տեսակէտից, այլ նաեւ գործնական մեծ նշանակութիւն ունի։ Ընտրելով նպատակ օրով տեսականապէս խաղողահիւթի թողած ֆիզիկ լոգիկական ներգործութիւնը առողջ մարդու կազմուածքի վրա, իր կատարած փորձերի հիման վրա, յանդու է հետաքրքիր երբակալութեան, որից համառօտակի քաղում են հետեւեալը։

1) խաղողահիւթի չափաւոր գործածութիւնը «խաւն» կերակրի հետ նուազեցնում է կազմուածքի ծախսելի ազօտի (N) քանակը։ Որչափ աւելի հարուստ է կերակուրը դիւրամարտ ուղտ պարունակող մասերով, նոյնքան աւելի շատ եւ դիւրին կերպով է կատարվում խաղողահիւթի ազօտ-խնամող ազդեցութիւնը։ 2) Միջին չափով ընդունած խաղողահիւթը նուազեցնում է աղիքային խաղողակում կատարվող կերակրի զանգուածի նեխվելու գործողութիւնը։ 3) Նպաստում է մարմնի քաշի աւելանալուն։

Հետեւապէս խաղողահիւթի բաղադրիչ մասերի ֆիզիկալօգիկական այս գործը յատկութեան է պարտական եւ նրա բաւօխ ազդեցութիւնը հիւանդ օրգանիզմի վրա։ Յիշաւի, չը խօսելով հեղինակաւոր մասնագէտների այս հարցի մասին կատարած դիտողութիւնների մասին, մեղ կովկասեցիներին՝ նոյնպէս անծանօթ չէ խաղողի այս յատկութիւնը—այդ մենք գիտենք մեր սովորական փորձից—մնում է միայն ցանկալի որ խկալի կերպով կաքողանանք գործադրել այս պարզ բժշկական միջոցը։ խաղողի թողած ազդեցութիւնը, բացի մի կարգ հիւանդութիւններից, նրա գործածութիւնը անուշապատ կարծած է մանաւանդ այն դէպքում, կըր օրգանիզմը, զանազան պայմանների ազդեցութեան տակ թուլացած լինելով կարօտ է կազդուրել միջոցի. այստեղ խաղողի ծառայութիւնը անգնահատելի է։ Նա ամբարանում է կազմուածքը, տալիս է մոտեւ եւ կանօնաւորում է մարդու գութեան գործողութիւնը։ Կովկասը, որ խաղողի հայրենիքը կարող է համարվել, դժբաղդաբար, ինչպէս նկատում է բժ. Մուրադեան, չունի մինչեւ այժմ խաղողի կայարաններ, ուր գործադրվէր խաղողով բժշկելու միջոցը։ Ռուսաստանում առհասարակ միայն վերջին ժամանակներում են սկսել հետաքրքրվել այս հարցով (առաջին խաղողի կայարանը հիմնվել է Եւրպայում, նոյնպիսի կայարաններ կան այժմ Գուրգուֆում, Ալուշուում եւ Թէօդօսիայում միայն) եւ պէտք է յուսալ, որ մօտիկ ապագայում մեղանում եւս կաւեւանան եւ կը հիմնվեն նորանոր կայարաններ, որոնք անշուշտ կը տան նոյն ցանկալի արգիւնքը, որպիսին այժմ

ւում մանաւանդ Սաքսոնիին նկարները իրանց օրիգինալ ժանրով, որ իր արուեստագէտի տեղեւածն է եւ որով նա առաջնորդվել է մինչեւ իր կեսնքի վերջը։ Յայնի է, որ գոյնեթի մեղմ խաղեր, բարդութիւններ ստանալու համար նկարիչները խառնում են իրար հետ պարզ գոյները։ Սաքսոնիին բոլորովին դրա հակառակ ոչ մի գոյն միւսին չէ խառնում կանխապէս, այլ ամեն մէկն առանձին-առանձին դրժում է կաւելի վրա, բայց այնպիսի չափով եւ այնպիսի վարպետ դասաւորութեամբ, որ օտարիկը ոչինչ չը ներկայացնող ներկերի այդ խառնաշփոթութիւնը, հետեւից դիտելիս, յարմարակից գեղեցիկութեամբ պատկերացնում է դաշտերի, լեռների, Սօրիգոյնի եւ երկնքի բազմապիսի գոյների ամենաքնքնայն խաղերին։ Ահա նրա «Ալպերը մայիսին»։ Նայելէք զառիւկայրերը պտտող այդ թաւ գեղեցիկ կանաչին, որից մարդ անկարող է լինում աչքերը հեռալք նել, այն աստիճան նա բնական է. մօտեցէք եւ այդ վառ կանաչի մէջ դուք կը տեսնէք բազմաթիւ կարմիր չնորներ, որ բոլորովին զատ ծրագրվում են կանաչ գոյների հետ, որոնք հետեւից, առանց խանգարելու կանաչ բնական տպաւորութիւնը, մի եւ նոյն ժամանակ աւելի վառ, աւելի պայծառ են դարձնում ընդհանուր պատկերը։ Նոյն ձեռով, դրժ ներկ դասաւորութեան մի եւ նոյն եղանակով է տալիս Սաքսոնիին նաեւ արալայցի պատկերը. պայտեղ էլ գոյներից ոչ մէկը միւսին չէ խառնված, եւ ամենքը միմիայն այնու ամենայնիւ ներկայացնում են վառ արալայցի բոլոր գոյներին ամենանմանը խաղերը։

(Կը շարունակվի)

Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванеская ул., № 27.